առ ձեզ» և հերձուած են յառաջ բերում, որոնց դէմ զգուշացնող խրատներ է տալիս։ Այստեղ եւս աւելացնում է Տիրատուր վարդապետից լսածը, որ վերև մէջբերինք։ Միջնադարեան մեծ վարդապետների բարձր դիրքն ու իրաւունքն է ցոյց տալիս այս հանգամանքը, որ նրանք կարող էին հրահանգել նոյնիսկ եպիսկոպոսներին և նրանց թեմերի ժողովրդին, բանադրել և արձակել, եթէ եկեղեցական կամ վարդապետական խնդիրներում պակասաւոր կամ զանցառու նկատուէին։

Բարեբաղդաբար հնարաւորութիւն ունինք որոշելու Մատթէոս եպիսկոպոսի անձնաւորութիւնն ու տեղը, հէնց այս ձեռագիրը (Էջմ. № 2776), ուր արտագրուած է Նչեցու թուղթը, գրուած է «եւթն հարիւր ՁԴ (= 1335) թուին», Բուսաիտ խանի (Աբու-Սէյիդ 1315–1335) ժամանակ. յիշատակարանի մէջ կայ (259ա) և ներբողական մաս, նուիրուած այս Մատթէոսին, որ ստացողն է գրքիս.

Եպիսկոպոս մի հրաշալի
Բաղմաց պատուած և մեզ ցուցան,
Տր. Մատթէոս սա անուանի
Որբոց 'ւայրեաց եղեալ պաշտպան։
. . . . . .
Եւ առաւել Տր. Մատթէոս,
Փայլեաց ի յազգս հայկազան.
Որպ. զարծիւ սլանալով
Առ թագաւոր և ընդ իշխան,
Շինողացանէր ըզբարկութիւն.
Որ բորբոքէր բաբելական.
Ցոյժ արտմութիւն. փարատեցաւ,
Ի խաւարէն զերծեալ լուծան։
Զտիւ և զդիշեր ոչ դադարեալ
Զաղօթս առնել որ իւր սահման։

Ոչ թէ լսել եմ և գրել,
Այլ իմ տեսած է զինչ գրեցան,
Կամք ունէի յերկար ասել,
Թէ կարդացուղքն չձանձրանան։

Վերջում աւելացնում է

Եւ եթէ զանունըս հարցանես,
Գրիգոր չերէց եմ անարժան,
Որ կարդեցի յայսմ տառի
Տունս թվով ՃՆ և քսան։

Մի ուրիշ «երգասաց» Յովհաննէս Տարբերունի գրել է մի ոտանաւոր գարձեալ նոյն ձեռագրի մէջ, 223բ. օրուայ չարիքին նուիրուած, «ըստ խնդրոյ հոգևոր եղբաւրս մերոյ Ասլանի և այլ քրիստոնէիցս Թավրիժի, զոր սիրով խնդրեալ». սկս. «Եկայք այսաւր որդիք մարդկան».

Ես Յոհաննէս Տարբերունի,
Որ զսակաւ բանքս երգեցի,
Ոչ զօրաւոր, այլ ըստ կարի,
Դէմ հոռոմոց և Ֆռանգի։

Վերջում.

Յերես անկեալ զձեզ աղաչեմ
Յիշման առնել զիս արժանի,
Զեղբայր Ասլան փառաւք իլի
Եւ զայլ եղբարսդ Թավրիժի։

Ֆռանգների և նրանց պատճառով յառաջ եկած հերձուածը Թաւրիզում յառաջ է եկել ՁՀ (= 1321) թուականին, երբ Բարդուղիմէոս եպիսկոպոսը հաստատուեցաւ Մարաղայում. այդ թուղթը, Յովհաննէս Տարբերունու ոտանաւորը և Գրիգոր երէցի յիշատակարանը ժամանակով և տեղով կապուած են իրար հետ, որ Մատթէոս եպիսկոպոսը հարկաւոր է համարել արտագրել տալ իւր ձեռագրի վերջում։ Այսպիսով որոշւում է, որ Մատթէոսը Թաւրիզի եպիսկոպոսն էր և Նչեցին իւր շրջաբերականն ուղարկել այնտեղի հայերին և նրանց առաջնորդին ՁՀ թուականին, մասաւորապէս այն ժամանակները, երբ Օշին Պայլին և նորա որդի Հեթումին ուղարկեց իւր միւս թուղթը։

Ոչ միայն Եսային, այլ և նորա աշակերտները աշխատել են այս վտանգաւոր շարժման առաջն առնել. Մխիթար Սասնեցին իւր մի աշխատութեան մէջ նկարագրում է այն վիճակը, որ յառաջ է եկել կաթոլիկ միսիոնարների և հայ միաբարների գործունէութեամբ, շատ նման Նչեցու թղթի նկարագրած դրութեան։ Մխիթար անպայման ծանօթ է շրջաբերականի կարգադրութեան. նա յայտնում է, որ սկզբում ֆրանգներին «ընկալաք պատուով իբրև զեղբայրս եւ ծառայակիցս ի Քրիստոս» . . . , իսկ այդպէս պատուիրել էր, ինչպէս տեսանք Նչեցին, «այլ դոքա իբրև զօձտոզս եկեղեցւոյ և հակառակորդ ճշմարտութեան և իբրև զգայլս ծածկեալ ստեւով գառանց, ճեղքեցին զոմանս ի մէնջ, գառնալով յառաջնորդէ և յեկեղեցւոյ իւրեանց, և անդուն բերանով հայհոյեն զկրօնս Հայաստանեայց»(*)։ Մէջբերուած խօսքերը, գրեթէ, բառացի նոյնանում է Նչեցու շրջաբերական հրահանգների հետ. իսկ Մխիթարը իւր այս աշխատանքը գրել է ՁՀ թուականին, որով և կողմնակի կերպով, բայց

սել, բայց գոյութիւն ունէր ԺԴ. դարի վերջերին, երբ Մխիթար Այրիվանեցին գրում էր Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութիւնը. տես մեր Մխիթար Այրիվանեցի տետրակը, երես 13, 19։

(*) Ձեռ. Էջմ. N° 732։ Տես մեր Մխիթար Սասնեցի. Վաղարշ. 1889. 19-24։ Նաև Արարատ. 1899. 158։